ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «11» 12 2024թ № 2941-Լ

«ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ» ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագրի 25-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով.

հրամայում եմ.

1. Հաստատել՝

1) «Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում իրականացվող մոնիթորինգի իրականացման կարգը՝ համաձայն N1 հավելվածի.

2) «Մեղվաբուծության զարգացման փորձնական» ծրագրի շրջանակում իրականացված մոնիթորինգի հարցաթերթի ձևը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Ծրագրի շրջանակում մոնիթորինգի իրականացումը վերապահել «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին:

Recoverable Signature

Ստորագրող
ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ
2102870448

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի

2024 թվականի դեկտեմբերի 11 -ի

N 2941- Լ հրամանի

ԿԱՐԳ

«ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ» ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշմամբ հաստատված «Մեղվաբուծության զարգացման փորձնական» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) 25-րդ կետի իրականացումը:

2. Սույն կարգը տարածվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) և Ծրագրին մասնակցելու նպատակով Նախարարություն դիմում ներկայացրած շահառուների վրա (այսուհետ՝ Շահառու):

3. Մոնիթորինգն իրականացվում է ՊՈԱԿ-ի կողմից տնտեսություններ կատարված այցելությունների, փաստաթղթերի և ձեռք բերված մեղվաընտանիքների (նոր մեղվափեթակների հետ միասին՝ 8-12 շրջանակով) ուսումնասիրության միջոցով:

4. Մոնիթորինգն իրականացվում է ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից՝ մեղվաընտանիքների (մեղվափեթակների հետ միասին՝ 8-12 շրջանակով) ձեռք բերումից հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, Նախարարության անասնաբուծության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գրության հիման վրա:

5. Մոնիթորինգն իրականացվում է ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժման աշխատակիցների կողմից՝ ներկայացված փաստաթղթերի

ուսումնասիրությունից և Շահառուի՝ տնտեսություն այցելության վերաբերյալ վերջինիս հետ նախնական պայմանավորվածությունից հետո: Շահառուն պարտավորվում է համապատասխան պայմաններ ապահովել Ծրագրի շրջանակում իրականացվող մոնիթորինգների իրականացման համար:

6. Մոնիթորինգն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

1) Շահառուի կողմից Ծրագրի 22-րդ և 24-րդ կետով պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո Վարչությունն ուսումնասիրում է Ծրագրով պահանջվող փաստաթղթերի առկայությունը:

2) Վարչությունը Շահառուի փաստաթղթերի փաթեթը, հարցաթերթը (հավելված N2) և համապատասխան գրությունը ներկայացնում է ՊՈԱԿ-ին՝ Շահառուի տնտեսությունում մոնիթորինգ իրականացնելու և համապատասխան տեղեկատվությունը ներկայացնելու նպատակով (գրությամբ):

3) Մոնիթորինգի ավարտին կազմված արձանագրությունը, լրացված հարցաթերթը՝ կից լուսանկարներով, ներկայացվում է Նախարարություն:

7. Ծրագրի շրջանակում մոնիթորինգն իրականացվում է Վարչության կողմից համապատասխան գրության և փաստաթղթերի փաթեթի ներկայացումից հետո՝ Շահառուի տնտեսություն այցի միջոցով, որի արդյունքում լրացվում է հարցաթերթը (հավելված N2)՝ Շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերի (դիմումը, իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերի փաստաթղթերը, բարվոք վարկային պատմության վերաբերյալ ԱՔՐԱ տեղեկատվությունը, հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը, անասնաբուժական տեղեկանքը, համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը՝ Շահառուի կողմից ձեռք բերված և համարակալված մեղվաընտանիքների (մեղվափեթակով) վերաբերյալ, որում պետք է նշված լինեն մեղվաընտանիքների քանակը և ձեռքբերման ժամկետը, մեղվափեթակը (մեղվաընտանիքով) վաճառողի իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատերի փաստաթղթերը, բարվոք վարկային պատմության վերաբերյալ ԱՔՐԱ տեղեկատվությունը, հարկային պարտավորությունների վերաբերյալ

տեղեկանքը, առուվաճառքի պայմանագիրը, վճարման անդորրագիրը, հաշվեհամարը, գրավոր պարտավորագիրը և մեկ տարի ժամկետով բանկային երաշխիքը)՝ Ծրագրին համապատասխանության վերաբերյալ: Մոնիթորինգի ընթացքում լուսանկարվում են ձեռք բերված և համարակալված մեղվափեթակները:

8. Ծրագրի իրականացման ժամանակահատվածում, ըստ անհրաժեշտության, Նախարարության նախաձեռնությամբ կարող է իրականացվել լրացուցիչ մոնիթորինգ:

9. Եթե լրացուցիչ մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ Շահառուն օտարել է ձեռք բերված մեղվափեթակները, ապա հայտնաբերման պահից սկսած, եռամսյա ժամկետում փոխհատուցված գումարը ենթակա է վերադարձման՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի N 283-Ն որոշման 1-ին կետը, իսկ չվերադարձնելու դեպքում այն կգանձվի դատական կարգով:

Հավելված N2

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի

2024 թվականի դեկտեմբերի 11 -ի

N 2947 - Լ հրամանի

Ձև

ՀԱՐՑԱԹԵՐԹ

«ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

Շահառու՝ _____, **Հեռախոսահամար՝**_____,
(անուն, ազգանուն)

ՀՀ մարզը՝ _____, **Համայնքը՝**_____,
(հասցե)

Մեղվափեթակներ (մեղվաընտանիքների հետ միասին) վաճառող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ՝ _____,
(անուն, ազգանուն)

Հեռախոսահամար՝_____, **ՀՀ մարզը՝**_____,

Համայնքը՝_____,
(հասցե)

Մեղվափեթակների առուվաճառքի ամսաթիվը՝ _____,

Ծրագրի շրջանակներում ձեռք բերված մեղվափեթակների (մեղվաընտանիքների հետ միասին) քանակը՝ _____ **հատ,**

Մեղվափեթակների համարակալված լինելը՝ _____

Մեղվափեթակում շրջանակների քանակը (մեղվով պատված, կախված եղանակային պայմաններից՝ կծիկ)՝ _____

Մեղվափեթակների նոր լինելը՝ _____

Անասնաբուժական տեղեկանքի (անասնաբուժական ուղեկցող փաստաթուղթ՝ անասնաբուժական վկայականի) առկայությունը՝ _____

Մեղվաընտանիքը տվյալ տարվա սերնդից ստացված լինելը՝ _____

Ծրագրի շրջանակում ձեռք բերված մեղվափեթակների (մեղվաընտանիքով՝ 8-12 շրջանակով) տարբերակումը իր ունեցած մեղվափեթակներից (առանձին տեղակայված, տարբերանշված և այլն)՝

_____

_____

Նշումներ (այդ թվում՝ խնդիրներ և առաջարկություններ) _____

_____

_____

_____

_____

_____

Առդիր՝ _____ մոնիթորինգի ընթացքում արված լուսանկարներ

Շահառու (ներկայացուցիչ/լիազորված անձ)՝ _____,

(անուն, ազգանուն)

_____

(ստորագրություն)

Մոնիթորինգ իրականացնող՝ _____, _____

(պաշտոն, անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Բաժնի պետ՝_____, _____

(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Տնօրեն՝_____, _____

(անուն, ազգանուն) *(կ.Ն. ստորագրություն)*

_____ _____ **202** թ.